

ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՌԵՂԾՈՒԱԾԻ ԼՈՒԾՈՒՄԸ

(Զեկուցուած է Կուլտուրայի Պատմութեան
Ինստիտուտի պատմական բաժնում 1933 թ.
յունուարի 21ին*)

ԶԵԿՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵԶԻՍՆԵՐԸ

1. Խորենացու «Հայոց Պատմութիւնը» և «Աշխարհացոյց»ը, ինչպէս երևում է այդ երկերի բովանդակութեան ուշագիւր քննութիւնից, գրուած են իններորդ դարում՝ Բազրատունիների գործընթացման, հայ վաճառականութեան զարգացման և Հայաստանի անտեսական վերածնութեան շրջանում :

2. Խորենացու պատմութիւնը գրուած է Բուղայի արշաւանքից (852 - 855 թ.) յետոյ : Այդ երևում է նրա «Ողբ»ի բովանդակութիւնից, որի մէջ ակնարկուած են նախարարական ընտանիքների գերփումը, գլխաւորների կաշառաւորումը և բանտարկումը, բռնի կրօնափոխութիւնները և կրօնական ընդհանուր բարոյալքումը, որ տեղի էին ունեցել Բուղայի արշաւանքի և Մուտաւակիլի խալիֆի կրօնական մոլեռանդ քաղաքականութեան ժամանակ : Երկրաշարժների վերաբերեալ «Ողբ»ի ակնարկը վերաբերում է դարձեալ իններորդ դարի երկրորդ քառորդին, որ Հայաստանում բացատրիկ

մի ժամանակաշրջան էր ահաւոր և աղետալի շարժերի :

3. «Ողբ»ի մէջ յիշուած «հովիւ»ը Ովայեցի Յովհաննէս Ե. կաթողիկոսն է (834-855 թ.) : Յովհաննէս Դրասխանակերտցին, որին յայտնի է եղել Խորենացու պատմութեան ճիշդ ժամանակը, «Ողբ»ի խօսքերով յիշում է «խրիստոսացեալն ի վարատմանէ փեսային» եկեղեցին և Խորենացու «փեսա»յի մասին վկայութիւնը վերագրում է ոչ թէ Սահակ կաթողիկոսին, այլ Յովհաննէս Ովայեցուն :

4. Խորենացու պատմութեան յունասէր ուղղութիւնը միանգամայն բնական ու հասկանալի է իններորդ դարի երկրորդ կիսում և հետեւանք է Բազրատունիների ու իշխող դասերի ընդհանուր մտայնութեան և, յատկապէս, այն բիւզանդասէր քաղաքական հակումների, որ սկսել էին ուժեղանալ 775 թուի նախարարական ապստամբութիւնից և, մասնաւոր, Բուղայի արշաւանքից յետոյ : Իններորդ դարի յիսուական թուականներին, ինչպէս յայտնի է, յատուկ բանակցութիւններ էին սկսուել որոնց նպատակն էր վերականգնել Յունաց և Հայոց մէջ կրօնական նախկին միութիւնը. ուստի և հասկանալի է նոյնպէս, թէ ինչու Խորենացու պատմութեան մէջ չկան որ և է ակնարկներ կրօնադաւանական վէճերի մասին :

5. Խորենացու «Աշխարհացոյց»ի և պատմութեան վկայութիւններից դժուար չէ նաեւ կռահել, որ այդ երկերը գրուած են Բազրատունիների իշխանութեան այն շրջանում, երբ

*) Ընդարձակ ուսումնասիրութիւնը յայտնի է տեսնելու Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտի «մեկնագրութիւնների մատենաշարք»ում :

«Մաւրիկոպաւլիս - Շիրակաշատ»ը գահանիտ կենտրոն էր դառել Շիրակի Բագրատունիների եւ Գեղարքունի գաւառը (հաւանօրէն՝ Մաքսնիսը) նշանաւոր ուսումնաւայր էր եւ «կրօնաւորական կայան»:

6. Երուսաղէմի մատենադարանի թիւ 113 ձեռագրում գտնուում է. «Չաքարիա կաթուղի կոսի եւ Մովսիսի քերթողի ի փոխումն Աստուածամարն եւ պատկերի նորին» ճառը (տե՛ս Գ. Չարրհանալեան, «Հայկական հին գպրութեան պատմութիւն», Վենետիկ 1897, էջ 503): Նոյն նիւթի մասին մի գրուածք վերագրուում է, ինչպէս յայտնի է, նաեւ Մովսէս Խորենացուն (տե՛ս «Մովսիսի Խորենացույ մատենագրութիւնք», Վենետիկ 1843, էջ 283-296, «Պատասխանի թղթոյն Սահակայ»): Ինձ թւում է, որ վերոյիշեալ «Մովսէս քերթող»ը, որը Չաքարիա կաթողիկոսի (855-875 թ.) հետ միասին գրել էր «ի փոխումն Աստուածամարն» ճառը, հէնց հոշակաւոր «քերդողահայր» Մովսէս Խորենացին է, որի պատմութիւնը յօրինուած էր նոյն այս ժամանակաշրջանում՝ Բուզայի արշաւանքից յետոյ:

7. Պիտոյից գիրքը, որը թարգմանուած է վեցերորդ դարի առաջին կիսում, եղել է դրպրոցական դասաւանդման ձեռնարկ եւ պարունակում է իր մէջ նաեւ Դաւիթ Հարքացու, Խոսրովիկի եւ այլ հեղինակների նորագոյն վարժութիւնները (տե՛ս իմ աշխատութիւնը՝ «Յունարան գպրոցը եւ նրա դարգացման շրջանները, Վիեննա 1928, էջ 10 եւ 105-124): Հաւանօրէն, նա վերստին խմբագրուել է նաեւ իններորդ դարում: Մովսէս քերդողի վերջաբանը, որը բանասէրները վերագրել են ըուն թարգմանչին, պատկանում է ըստ իս, ինչպէս այդ կարելի է ենթադրել նրա վերնագրի ու լեզուի քննութիւնից, Մովսէս Խորենացուն եւ գրուած է իններորդ դարի վերոյիշեալ ժամանակաշրջանում:

8. Մովսէս քերդողի Թէոգորոս աշակերտը, որի համար շարագրուած էր վերջաբանը իբրեւ

«Խրատարանութիւն յորդորական», հաւանօրէն այն Թէոգորոսն է, որը յիշատակուած է իններորդ դարի երկրորդ կիսում՝ իբրեւ ուսուցիչ Մաշտոց կաթողիկոսի (տե՛ս Չարրհանալեան, «Հայկական հին գպրութեան պատմութիւն», էջ 506): Որոշուում է ըստ այսմ իններորդ դարի երկրորդ կիսում յունարան գպրոցի հետեւորդների հետեւեալ յաջորդականութիւնը՝ Խորենացու կամ Մովսէս քերդողի աշակերտն էր Թէոգորոսը, Թէոգորոսի աշակերտն էր Մաշտոց կաթողիկոսը եւ Մաշտոցի աշակերտն էր Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցին:

9. «Հայոց պատմութեան» վերնագրում «Մովսէս Խորենացի» անունը հեղինակի իսկական անունն է: Այդ երևում է Խորենացու միւս գրուածքների վերնագրերից, որոնց մէջ նա ո՛չ մի պատճառ չունէր թուրքներու կամ կեղծելու իր անունը: Պահպանելով վերնագրի մէջ իր իսկական անունը՝ իր պատմութիւնը Խորենացին յօրինել է, հաւանօրէն, հետադարձ «բարանութեան» ձեւով, վերագրելով այն Սահակ - Մեսրոպի աշակերտ համանուն Մովսէսին:

10. «Աշխարհացոյց»ը, որի այժմեան խմբագրութիւնները (տե՛ս «Մովսէսի Խորենացույ մատենագրութիւնք», Վենետիկ 1843, էջ 585-616 եւ հրատար. Սուքրեանի, Վենետիկ 1881) համառօտուած են նախնական աւելի ընդարձակ բնագրից, անպայման Խորենացու աշխատութիւնն է:

11. Պատկանեանի յայտնած ու ընդհանրացած կարծիքը, որ «Աշխարհացոյց»ի հեղինակն Անանիա Շիրակացին է՝ ճիշդ չէ: Շիրակացու ու «Աշխարհացոյց»ի հեղինակի աշխարհագրական հայեացքներն այնքան իրարից տարբեր են, որ ո՛չ մի կասկած չի կարող լինել, որ «Աշխարհացոյց»ը Շիրակացուն վերագրելը միանգամայն անյաջող մի կուհուում է: Շիրակացին երկիրը համարում է «չորեքուսի» (տե՛ս «Անանիայի Շիրակունույ մնացորդ բանից», հրատ. Բ. Պատկանեանի, Պետերբ. 1877, էջ

37, 39, 60), իսկ «Աշխարհացոյց»ի հեղինակը՝ «գնդաձե» (տե՛ս հրատ-Սուքրեանի՝ էջ 6, տող 18-21 եւ էջ 7, տող 19-23, հմմտէ նաեւ Վե- նետ. հրատ. 1843՝ էջ 587, տող 6-11 եւ էջ 589, տող 7-13): Շիրակացին արեղակը ենթադրում է աւելի մեծ քան երկիրը (տե՛ս «Մնացորդք րանից» էջ 60), իսկ «Աշխարհացոյց»ի հեղի- նակը՝ «փոքրագոյն քան զերկիր» (տե՛ս Սուք- րեանի հրատ. էջ 7, տող 15-18 եւ Վենետ. հրատ. էջ 589, տող 1-5): Տարբեր են նաեւ յաճախ նրանց աշխարհագրական տերմինները:

12. Հիւրչմանի կարծիքը (տե՛ս «Հին հա- յոց տեղւոյ անունները», Թարգմ. Պիլեզիկ- ճեանի, Վիեննա 1907, էջ 262-267)՝ որ Խորե- նացու Պատմութիւնն «աշխարհագրական տե- սութիւններով ու անուններով» աւելի Փաւստո- սին է մօտ, քան «Աշխարհացոյց»ին՝ հաւանա- կան չէ: Ուշադիր քննութեամբ, ոչ միայն հեր- քում են Հիւրչմանի մատնանշած փաստերը, այլ եւ ապացուցում է որ Պատմութեան ու «Աշխարհացոյց»ի մէջ կան բազմաթիւ նմանու- թիւններ, որոնք բացատրում են նրանց հեղի- նակի նոյնութեամբ:

13. «Հայոց պատմութեան» մէջ անընդհատ կրկնւում են Խորենացուն առանձնայատուկ դարձուածքները, ինչպէս՝ «գիտեմ», «ոչ գի- տեմ», «կարծեմ», «ինձ թուի», «հաւանեալ եմ», «ոչ հաւատամ», «ճմարիտ է», «ասեմ», «գրեմ», «սկսայց», «մեզ անհաւատալի է, այ- լոց՝ որպէս կամք իցեն» եւն. — որոնք անսովոր են ու հազուադիւս միւս մատենագիրների մօտ: Արդ՝ նոյն այս դարձուածքները, որ հանդի- պում են շարունակ նաեւ «Աշխարհացոյց»ի մէջ՝ կարեւոր մի նշան են ըստ իս, որ «Աշխարհա- ցոյց»ի հեղինակը Մովսէս Խորենացին է: Ու- շադրութեան արժանի է նաեւ այն, որ Պատ- մութեան, ինչպէս եւ «Աշխարհացոյց»ի մէջ, նման ձեւով առաջ են բերուած ու մեկնուած հին առասպելները:

14. Ուշադրութեան արժանի է, որ Խորե- նացու Պատմութիւնն «Աշխարհացոյց»ի նման

բաժանուած է «հատած»ների: Պատմութեան ու «Աշխարհացոյց»ի խորթ ու անսովոր այս վեր- նագրերը, որ գրեթէ չեն հանդիպում մատենա- գրական միւս հին երկերում, կարող են դար- ձեալ մի ահնարկ համարուել, որ այդ երկու գրուածքն էլ միեւնոյն հեղինակի աշխատու- թիւն են:

15. «Աշխարհացոյց»ը, որ անպայման Խո- րենացու աշխատութիւնն է, գրուած է, ինչպէս երեւում է մեր մանրագին ուսումնասիրու- թիւնից, իններորդ դարում՝ արարական տի- րապետութեան եւ Արքայականների իշխանու- թեան ժամանակ: Մեր վերոյիշեալ եզրակացու- թիւնը Խորենացու ժամանակի մասին հաս- տատում է, ուրեմն, եւ «Աշխարհացոյց»ի ժա- մանակի որոշմամբ:

16. «Մղոնաշափք»ը, որ տպագրուած է «Ազուէսագրք»ի հրատարակութիւններում (Ա- մստերղամ 1668, Մարսիլիա 1676 եւ 1688. Փրանսերէն Թարգմանութիւնը տե՛ս Saint - Martin, Mémoires historiques et géogra- phiques sur l'Arménie, Բ. Paris 1819, էջ 395-397. ռուսերէն Թարգմանութիւնը տե՛ս իմ աշխատութեան մէջ՝ Ա տարգովի է կօթօտախ Առլէֆիին, Երեւան 1930, էջ 171-173), գրուած է Խորենացու ժամանակաշրջանում եւ կարող է լինել նրա աշխատութիւնը:

17. Կեղծ - Կալիսթէնէսի « Աղեքսանդրի վարք»ի Թարգմանութիւնը, որը հաւանական է վերագրել Խորենացուն, գրուած է ո՛չ թէ հինգ- երորդ դարում, ինչպէս այդ ենթադրել է Տաշ- եանը (տե՛ս «Ուսումնասիրութիւնք Ստոյն - Կալիսթէնէսայ Վարուց Աղեքսանդրի», Վիեն- նա 1892), այլ իններորդ դարում:

Հանգուցեալ Մարկուարտի եզրակացու- թիւնները հաստատում են.

18. Մարկուարտի կարծիքը, որ Խորե- նացու Պատմութիւնը գրուած է իններորդ դարի երկրորդ կիսում, Սմբատ սպարապետի որդու՝

«Իշխանաց Իշխան» Աշոտի ժամանակ (տե՛ս Die Genealogie der Bagratiden und das Zeitalter des Mar Abas und Ps. Moses Chorenathsi, Caucasica, Fasc. 6, 2 Teil, Leipzig, 1930, էջ 67)՝ հաստատուում է մեր ուսումնասիրութեան նոր տուեալներով: (Իր այս եզրակացութեան հիմնաւորումը Մարկուարտը խոստացել էր տալ իր յաջորդ աշխատութիւններում, տե՛ս նոյնը, էջ 67):

19. Եթէ Խորենացին, Մար Աբասի վկայութեան հակառակ, Բագրատունիներին նախահայր համարում է Շամբատ - Սմբատին՝ «զկոչեցեալն Բագարատ», զրա սպառնառը, ինչպէս ու-

զիղ նկատել է Մարկուարտը, այն է, որ նա համակրում էր Սմբատ Խոստովանողին եւ ատում Տարօնի հաւատուրաց Բագարատին (տե՛ս Genealogie, էջ 67):

20. Խորենացու այս Շամբատ - Բագարատը, ինչպէս այդ լուսարանել է Մարկուարտը, նախատիպն է, ուրեմն, Սմբատ սպարապետի, որը 856 թուին վախճանուել էր Սամարայում «վասն Քրիստոսի խոստովանութեանն» (Genealogie, էջ 65):

ՊՐՈՖ. ՅԱԿՈԲ ՄԱՆԱՆԴԵԱՆ

Երեւան